

**ԿԻԼԻԿԱՆ ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉ ՄԱՏՅԱՆՆԵՐԻ
ՆԿԱՐԱԶԱՐԴՈՒՄՆԵՐԸ 1250–1350–ԱԿԱՆ ԹԹ.***

Բանալի բառեր – Կիլիկիա, կիլիկյան մանրանկարչություն, Աստվածաշունչ, Աստվածաշունչ մատյանների նկարագրում, Հովհաննես Արքաեղբոր դպրոց, Հեթում արքայի Աստվածաշունչ, Սարգիս Պիծակ, Վենետիկի Հ^{մր}1/1508 Աստվածաշունչ, հինկտակարանային պատկերներ:

Մուտք

Կիլիկիայում ստեղծված Աստվածաշունչ մատյանները, որոնք առանձնա՛նում են հայկական մանրանկարչական մյուս դպրոցների ձեռագրերից իրենց շքեղությամբ, կատարման բարձր վարպետությամբ, ինչպես նաև աստվածաշնչյան պատկերագրական հարուստ համակարգով և նորամուծություններով, կարևորագույն դեր ունեն հայերեն Աստվածաշնչի գեղարվեստական հարդարանքի գործում:

Կիլիկիան առաջնային դեր ուներ ոչ միայն Աստվածաշունչ մատյանների պատկերագրումների, այլև, առաջին հերթին, Աստվածաշունչ գրքի առաջին ամբողջական խմբագրման գործում: ԺԲ դարի վերջին այդ անչափ կարևոր առաքելությունն իրականացնում է Ներսես Լամբրոնացին (1153–1198 թթ.), ով հայ իրականության մեջ առաջինն է ժողովել Աստվածաշունչը և կատարել ամբողջական խմբագրում¹:

Աստվածաշնչի հաջորդ նշանավոր կարգավորողը Գևորգ Սկևռացին էր (1246–1301 թթ.), ով յուրաքանչյուր Ավետարանի սկզբում ավելացված նախադրությունների հեղինակն է: Սկևռացու աշխատությամբ կյանքի է կոչվել հայերեն Աստվածաշնչի կիլիկյան խմբագրությունը²: Իսկ առաջին ձեռագիրը, որում վերջնականապես կարգավորված են Աստվածաշնչի գրքերը՝ նախադր-

* Հոդվածն ընդունվել է տպագրության 15.10.2021:

1 Տե՛ս Ալիսեան Հ. Ն. վ., Ներսես Լամբրոնացի, արքեպիսկոպոս Տարոնի, Վիեննա, «Մխիթարեան տպարան», 1956, էջ 318-319: 1298 թ. Մովսես վրդ. Երզնկացու ՄՄ 177 ձեռագրի 418 ք էջի հիշատակարանում գրված է, որ Լամբրոնացին է հավաքել Աստվածաշնչերի զանազան մասերը և զետեղել մեկ հատորի մեջ (տե՛ս Մայր Մաշտոց, աշխ. Տեր-Վարդանեան Պ. ի, հատ. Ա., գիրք Ա., Սբ. Էջմիածին, 2012, էջ 17):

2 Տե՛ս Աճեմեան Շ. արք., Հայերեն Աստուածաշունչը, Եր., ԵՊՀ, 2006, էջ 199:

րությամբ և գլխացանկով, Հեթում Բ թագավորի 1295 թ. ՄՄ 180 Աստվածաշունչն է³:

Մեզ հասած հայերեն առաջին լիարժեք Աստվածաշնչի (1269 թ. Երզնկայի Աստվածաշունչ, Երսղմ Հ^{ւր} 1925) ստեղծումից առաջ Կիլիկիայում արդեն սկսվել էին ամբողջական Աստվածաշնչերի առաջին ընդօրինակումները, որոնք, ցավոք, չեն պահպանվել⁴: Փաստորեն, հայերեն լիարժեք Աստվածաշունչ մատյանների ստեղծումը և դրանց պատկերագրական համակարգի ձևավորումը սերտորեն կապված են Կիլիկիայի գրչատների հետ:

Վաղ շրջանում **ԺԳ դարի 50-ական թթ.**, Կիլիկիայում ընդօրինակված մասնակի Աստվածաշունչ մատյաններից պահպանվել են միայն երկուսը՝ **1253-1255 թթ. ՄՄ 178**-ը և **1255 թ. ՄՄ 6661**-ը: Դրանց զարդարանքը պարզունակ է՝ մեկական միագույն անվանաթերթ Ծանոց գրքի և Պողոսի թղթերի սկզբում, ՄՄ 6661-ում՝ նաև մեկ ավետարանիչի պատկեր:

Աստվածաշունչ մատյանների նկարագարդման համակարգի ձևավորման գործում անգնահատելի է հատկապես ԺԳ դարի երկրորդ կեսին Ակներ, Գոներ և Բարձրբերդ վանքերի գրչատներում ձևավորված և **Հովհաննես արքեպիսկոպոսի (Արքաեղբայր)** ղեկավարած դպրոցի գործունեությունը, որտեղ պատկերագարդված մատյաններն աչքի են ընկնում իրենց գեղարվեստական արժեքով, հարուստ և ներդաշնակ գույներով, մարգարտաշար բոլորգրով, մարդկանց պատկերների առատությամբ, իսկ դրանց պատկերագրական համակարգը հետագայում հիմք է դարձել նաև մյուս մանրանկարչական դպրոցների Աստվածաշունչ մատյանների նկարագարդումների համար:

Այսպիսով՝ սկսվում է կիլիկյան Աստվածաշունչ մատյանների նկարագարդման հարյուրամյա փայլուն շրջանը, որն իր ավարտին է հասնում ԺԹ դարի երկրորդ կեսին՝ պետության անկմանը զուգահեռ:

1. Հովհաննես Արքաեղբոր դպրոցում նկարագարդված Աստվածաշունչ մատյանները

Հովհաննես Արքաեղբոր դպրոցում **1260-1270-ական թթ.** ստեղծված ՄՄ 4243 (1263-1266 թթ., Մասունք Աստվածաշնչի, Բարձրբերդ) և ՄՄ 345 (1270 թ., Աստվածաշունչ, Գոներ) ձեռագրերում արդեն տեսնում ենք կիլիկյան Աստվածաշունչ մատյանների գրեթե լիարժեքորեն ձևավորված պատկերագրական համակարգը⁵: Այս երկու ձեռագրերի գեղարվեստական հար-

3 Տե՛ս նույն տեղում, էջ 232:

4 Տե՛ս Մայր Մաշտոց, էջ 16-19:

5 Արքաեղբոր դպրոցում նկարագարդված Աստվածաշունչ մատյանների մասին տե՛ս **Քեչիյան Օ. Պ.**, Հովհաննես Արքաեղբոր դպրոցում ձևավորված աստվածաշնչյան ձեռագրերի նկարագարդման համակարգը և գեղարվեստական առանձնահատկությունները, Երիտասարդական 3-րդ գիտաժողովի զեկուցումներ, Երևան-Մատենադարան, 2018, էջ 357-378:

դարանքն արդեն հիմք է դառնում աստվածաշնչյան հետագա պատկերագարողունների համար ինչպես Կիլիկիայում, այնպես էլ բուն Հայաստանում: Դրանցում զարդատառերով, ճակատագարդերով և լուսանցապատկերներով շեշտվում են ոչ միայն ժողովրդի համար առավել սիրելի աստվածաշնչյան մի քանի գրքեր՝ Սաղմոսներ, Պողոսի թղթեր և այլն, ինչպես նախկինում էր արվում, այլև մնացած գրեթե բոլոր գրքերը:

ՄՄ 4243 ձեռագրում ուշադրության են արժանի աստվածաշնչյան գրքերի հեղինակների, թագավորների և մարգարեների պատկերները լուսանցքներում կամ բնագրի որևէ սյունակի տեղում, ինչպես, օրինակ, Պետրոս առաքյալի թղթերը զարդարող հեղինակի պատկերը բնագրի առաջին սյունակի տեղում (էջ 50 ա, նկ. 1), Ովսեն մարգարեի սքանչելի պատկերն իր գրքի սկզբում (էջ 193 բ), Ամբակում և Հովել մարգարեների պատկերները լուսանցքներում (209 բ և 204 բ էջեր) և այլն⁶:

Ձեռագրի մանրանկարները սերտ առնչություններ ունեն բյուզանդական ԺԱ-ԺԲ դդ. գրքարվեստի հետ⁷: Վատիկանում պահվող Բարսեղ Բ-ի Հայսմավուրքում (Cod. Grec. 1613, Ժ դ. վերջ, ԺԱ դ. սկիզբ) տեսնում ենք մի շարք նմանություններ ՄՄ 4243-ի որոշ մարգարեների հետ⁸: Բյուզանդական Աստվածաշնչերում ևս յուրաքանչյուր գրքի սկզբում ուղղանկյուն ոսկեգօծ ճակատագարդեր են, ոսկի ու ծաղկազարդեր պարունակող դեկորատիվ ժապավեններ, ինչպես կիլիկյան Աստվածաշնչերում:

Կիլիկյան մանրանկարչությունը, կրելով բյուզանդական արվեստի որոշակի ազդեցությունը և պահպանելով հայկական մանրանկարչական ավանդույթը, հասնում է կատարելության բարձր աստիճանի՝ միաժամանակ գտնելով արտահայտման նոր լուծումներ ու նոր գաղափարներ⁹: Դա շատ լավ երևում է կիլիկյան Աստվածաշնչերում, որոնցում նույնպես, ինչպես հունարեն ձեռագրերում, աստվածաշնչյան կերպարները տեղադրված են յուրաքանչյուր գրքի սկզբում¹⁰:

Ի տարբերություն բյուզանդական Աստվածաշնչերի՝ կիլիկյան Աստվածաշնչերում մեծ թիվ են կազմում նաև գեղեցիկ լուսանցագարդերը՝ բուսական կամ թռչնային տարրերով, իսկ լուսանցքներում առատորեն տեղադրված մարդկային կերպարները շատ ավելի շարժուն են ու արտահայտիչ, քան հունարեն ձեռագրերում: Մանրանկարները երբեմն զբաղեցնում են ամբողջական էջ, բայց առավել հաճախ՝ բնագրի մի սյունակ կամ վերջինիս

6 Փաստորեն, ՄՄ 4243 ձեռագրի նկարագարողուն ավելի վաղ շրջանի է, քան մեզ հասած առաջին ամբողջական Աստվածաշնչինը (Երզնկայի Երսղմ Հմր 1925):

7 Տե՛ս Ազարյան Լ., Կիլիկյան մանրանկարչությունը XII-XIII դդ., Եր., ՊԱ, 1964, էջ 78, Лазарев В., История византийской живописи, М., «Искусство», 1986, табл. XV, 80 а, 82 б, 134 а:

8 Տե՛ս Der Nersessian S., Miniature Painting in the Armenian Kingdom of Cilicia from the Twelfth to the Fourteenth Century, V. I, Washington, D. C., "Dumbarton Oaks Research Library and Collection", 1993, էջ 84:

9 Տե՛ս Manoukian S., L'art du livre en Cilicie et les traditions byzantines, L'Arménie et Byzance, Paris, 1996, էջ 130:

10 Տե՛ս Ղազարյան Վ., Սյուժետային մանրանկարը Կիլիկիայում, XIII դ. վերջ, XIV դ. սկիզբ, Եր., ՊԱ, 1984, էջ 68, Казарян В., Манукян С., Матенадаран, «Москва-книга», 1991, էջ 169:

մի փոքր հատված՝ շրջանակով կամ առանց դրա, ինչպես բյուզանդական ձեռագրերում:

Նշենք նաև, որ, բյուզանդական արվեստի հետ ունեցած սերտ առնչություններին զուգահեռ, Արքաեղբոր դպրոցում պարզորոշ երևում են զուտ հայկական և հենց Կիլիկիայի գրքարվեստի ավանդույթները:

1270 թ. ՄՄ 345 ձեռագիրը մեզ հասած կիլիկյան առաջին ամբողջական Աստվածաշունչն է և երկրորդը՝ 1269 թ. Երզնկայի ձեռագրից հետո (Երսղմ Ը^մ 1925): Ձեռագիրն ունի լուսանցքներում արված մարգարենների և թագավորների պատկերներ, ուղղանկյուն կիսախորաններ և ճակատագարդեր, ինչպես նաև թռչնագիր գլխատառեր: Առանձնահատուկ ուշադրության են արժանի Հին Կտակարանի պատկերները (նկ. 2), որոնք աչքի են ընկնում գունային նուրբ գամնայով՝ բաց մանուշակագույն, բաց երկնագույն, բաց վարդագույն պաստելային երանգների խաղով:

Հինկտակարանային կերպարներից ուշագրավ են կանայք՝ Եսթեր թագուհին (331 բ) և Հողոփեռնես զորավարի գլուխը կտրած և այն ձեռքերում պահող Հուդիթը (339 ա), որոնք քիչ են հանդիպում ԺԳ-ԺԴ դդ. հայերեն ձեռագրերում, և մեզ ծանոթ են միայն մի քանի հետաքրքիր օրինակներ կիլիկյան և գլաձորյան Աստվածաշնչերից¹¹:

Արքաեղբոր դպրոցին է պատկանում նաև Վենետիկի Մխիթարյան միաբանության գրադարանում պահվող Ը^մ 21/376 (Գիրք Սողոմոնի և Հոբի, Բարձրբերդ, 1255–1271 թթ.¹²) մասնակի Աստվածաշունչը, որն ունի հինկտակարանային մի քանի պատկերներ՝ նվիրված Սողոմոնին: Զարդարված էջերից ուշադրության է արժանի հատկապես 106բ էջի լուսանցապատկերը՝ «Երգ Երգոց» գրքի հարս ու փեսայի կերպարներով¹³:

Այսպիսով՝ ԺԳ դարի երկրորդ կեսից սկսում է ձևավորվել կիլիկյան Աստվածաշունչ մատյանների նկարազարդման համակարգը, ինչը սերտորեն առնչվում է Հովհաննես Արքաեղբոր դպրոցի գործունեությանը: Հետագայում այդ համակարգը տարածում է գտնում նաև հայկական մանրանկարչական մյուս դպրոցներում: Մեծ է Արքաեղբոր դպրոցի դերը նաև Աստվածաշունչ մատյանների պատկերագրական համակարգում նոր տեսարաններ ավելացնելու գործում: Այստեղ ձևավորված ավանդույթներն են ընկած Հեթում արքայի 1295 թ. հռչակավոր Աստվածաշնչի պատկերագրման հիմքում, իսկ հետագայում՝ ԺԴ դարում՝ նաև Սարգիս Պիծակ նկարչի աշխատանքներում:

11 Տե՛ս **Քեչիշյան Օ. Պ.**, նշվ. աշխ., էջ 366:
12 Տե՛ս **Սարգիսեան Հ. Բ. Վ.**, Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց Կ Վենետիկ, հատ. Ա., Վենետիկ, 1914, էջ 163, **Ալիշան Ղ.**, Սիսուան, Վենետիկ, Սբ. Ղազար, 1885, էջ 148:
13 Տե՛ս **Քեչիշյան Օ. Պ.**, նշվ. աշխ., էջ 361:

2. 1290-ական թթ. կիլիկյան Աստվածաշունչ մատյանները

1290-ական թթ.՝ Հռոմկլա կաթողիկոսական նստավայրի ավերումից հետո (1292 թ.), հետզհետե անցում է կատարվում ազգային ավանդույթները պահպանող գարդային, հարթապատկերային-երկրաչափական ոճին, որն իր գագաթնակետին է հասնում Արքաեղբոր աշակերտ Գրիգոր Պիծակի և հատկապես վերջինիս որդու՝ Սարգիս Պիծակի արվեստում (ԺԴ դար)¹⁴:

Շարունակվում են մինչ այդ սկիզբ առած շփումները լատինների հետ, որոնց մշակույթի ազդեցությունը նկատելի է տվյալ ժամանակաշրջանի Աստվածաշունչ մատյանների գլխագրության¹⁵, հագուստի, զենք ու զրահի պատկերման մեջ և այլն:

1293 թ. Կիլիկիայի Մեծայր անապատում ընդօրինակված և այժմ Անթիլիասում պահվող **Նոր Կտակարանի (ՀժԹ 212)** առաջին հատվածի գարդանկարչությունը կիլիկյան ոճի է, իսկ երկրորդ մասն ամբողջությամբ (հավանական է՝ հավելվել է հետագայում) կրում է արևմտյան, մասնավորապես՝ իտալական արվեստի ազդեցությունը: Դա երևում է մարդկանց պատկերման եղանակի, հագուստի ձևավորման մեջ: Այստեղ կան նաև լատիներեն նշումներ, օրինակ՝ 132 բ էջում¹⁶:

Լատինական մշակույթի ազդեցությունը կրած 1290-ական թթ. աստվածաշնչյան ձեռագրերից են նաև Հեթում արքայի 1295 թ. Աստվածաշունչը (ՄՄ 180) և Ստեփաննոս Գոյներիցանց գրչի ընդօրինակած ՄՄ 179 ձեռագիրը, որում գլուխների բաժանումներն արված են զուգահեռաբար և՛ ֆրանկյան, և՛ հայկական համարակալման համակարգերով:

Լատիներեն համարաբառի համարները հայերեն աստվածաշնչյան ձեռագրերում նպաստել են լատիներեն և հայերեն բնագրերի համեմատական քննությանը: Այս նորամուծությունը վերագրվում է Հեթում Բ թագավորին, որի Աստվածաշունչը պահպանվել է լուսանցքային ձեռագիր ծանոթագրություններով, որում այդ համարակալումը նա կոչում է «համար ֆռանգին»¹⁷: Հեթում արքան խիստ հետաքրքրված էր աստվածաբանական հարցերով, տեղյակ էր, թե ինչ է արվում այդ բնագավառում Եվրոպայում, և իր Աստվածաշունչը գլխագրել է ըստ Փարիզի համալսարանի աստվածաբանների հաստատած գլխագրության համակարգի¹⁸:

14 Տե՛ս **Պազարյան Վ.**, Սյուժետային մանրանկարը Կիլիկիայում, էջ 60:

15 Տե՛ս նույն տեղում, էջ 62:

16 Տե՛ս **Agémian S.**, Manuscris Arméniens Enlumines du Catholicoscat de Cilicie, Antelias-Liban, 1991, էջ 21:

17 **Ներսեսյան Ն. ավ. քին.**, Աստվածաշունչը և հայ մշակույթը, Լոնդոն, 2001, էջ 30:

18 Տե՛ս **Պրամբյան Ի.**, Հեթում Բ. արքայի ճաշոցը, Եր., «Սահրի», 2004, էջ 10:

Հեթում արքայի ՄՄ 180 Աստվածաշնչի նկարագարդման համակարգը շարունակում է Հովհաննես Արքատեղբոր դպրոցի ձեռագրերի ավանդույթը, իսկ պատկերագարդման սկզբունքները՝ 1286 թ. Ճաշոցի (ՄՄ 979) ոճը¹⁹:

Ձեռագիրը լիարժեք Աստվածաշունչ է՝ բազմաթիվ լուսանցագարդերով, որոնցով շեշտված է աստվածաշնչյան գրերն յուրաքանչյուր գիրք կամ գլուխ: Գրքերի սկիզբն ընդգծված է նաև ճակատագարդերով՝ մեկ սյան լայնության (հազվադեպ՝ երկու), ուղղանկյուն կամ Ու-աձև, որոնց եզրերը զարդանախշեր ունեն: Ճակատագարդերի մեջ հանդիպում ենք կենդանիների, դիմակների, թռչունների, բարձր գլխարկներով մարդկանց գլուխների պատկերներ, ինչպես ՄՄ 9422 և ՄՄ 2629 կիլիկյան ձեռագրերում²⁰:

Յուրաքանչյուր գիրք զարդարված է նաև մեկ կամ ավելի լուսանցագարդերով, իսկ տասներկու մարգարեների գրքերի սկզբում՝ լուսանցքներում, համապատասխանաբար պատկերված են հեղինակները: Նրանք պատկերված են մինչև գոտկատեղը կամ կուրծքը՝ կիսով չափ ներառված կիլիկյան լուսանցագարդի տեսքով զարդարուն շրջանակի մեջ²¹: Դրանք եզրագծված կամ հաճախ լցված են ոսկով: Լուսանցապատկերները շրջանակների մեջ առնելու սովորույթը գալիս է դեռևս Վասակ իշխանի պատվիրած Ավետարանից (Երուսաղեմ, Հ^մ 2568, 1270-1284 թթ.)²²:

Իրենց շքեղությամբ և արտահայտչականությամբ աչքի են ընկնում 384 ա էջի Անուվա (նկ. 3), 389 բ էջի Աբդիու և Հովնան (նկ. 4), 391 ա էջի Ամբակում և 408 ա էջի Երեմիա մարգարեների պատկերները, որոնք փառասակներ հիշեցնող ոսկե խորքով շրջանակների մեջ են:

Անգնահատելի է Հեթում Բ-ի վաստակը որպես մեկենասս հայ մշակույթում և հատկապես գրքարվեստում²³: Նա կիլիկյան ամենաուսյալ թագավորներից էր, իսկական գեղագետ և պետք է ունեցած լիներ մեծ մատենադարան, որտեղ պահվող պատկերագարդ ձեռագրերից երկուսը՝ իր պատվիրած ՄՄ 979 Ճաշոցը և ՄՄ 180 Աստվածաշունչը, միջնադարյան Հայաստանում հազվադեպ նկարագարդվող գրքերից էին²⁴:

1292 թ. ՄՄ 179 Աստվածաշունչն ընդօրինակած Ստեփաննոս Գոյներիցանցը հռչակավոր գրիչ էր և տասնութ տարի աշակերտել էր Գևորգ Սկևռացուն²⁵: Ձեռագիրը գրված է այն ժամանակվա մանր ու սահուն բոլորգրով: Միակ մանրանկարը Ծննդոց գրքի նախադրության վերջում (1 բ, նկ. 5)՝ շրջանակի մեջ տեղադրված Մովսես մարգարեի պատկերն է, որը բնագրի երկրորդ սյունակի վերին փոքրիկ հատվածն է զբաղեցնում: Մարգա-

19 Տե՛ս Կазарян В., Манукян С., նշվ. աշխ., էջ 194:

20 Տե՛ս նույն տեղում, էջ 197:

21 Տե՛ս նույն տեղում:

22 Տե՛ս Der Nersessian S., Miniature Painting in the Armenian Kingdom of Cilicia..., էջ 123:

23 Տե՛ս Դրամբյան Ի., նշվ. աշխ., էջ 13:

24 Տե՛ս նույն տեղում:

25 Տե՛ս Կазарян В., Манукян С., նշվ. աշխ., էջ 187:

րեն պատկերված է Մինա լեռան վրա ծնկի իջած աղոթելիս, իսկ վերևում Աստծո աջն է: Մանրանկարն իր ոճով շատ մոտ է կիլիկյան արքունական դպրոցի ձեռագրերին, իսկ տեղադրման այս ձևը Կիլիկիա է ներթափանցել բյուզանդական ձեռագրերից: ՄՄ 179 ձեռագրում ևս գլուխները բաժանված են ինչպես հայկական ավանդական, այնպես էլ ֆրանկյան համակարգերով²⁶:

3. ԺԴ դ. առաջին կես. Սարգիս Պիծակի նկարազարդած Աստվածաշունչ մատյանները

ԺԴ դարում կիլիկյան Աստվածաշունչ մատյանները, չնայած քաղաքական վայրիվերումներին, երկրի վիճակի վատթարացմանը և արվեստի անկմանը, նոր փուլ են թևակոխում, ուստիև հարուստ են մանրանկարներով: Կիլիկյան գրքարվեստը դարի առաջին կեսին առանձնանում է հարթապատկերային-երկրաչափական ոճով, իսկ մյուս կողմից էլ՝ աստվածաշնչյան պատկերների առատությամբ:

Կրճատված տեսարանների պատկերումը կիլիկյան գրքարվեստ է ներթափանցում դեռևս ԺԳ դարից, ԺԴ դարում դառնում է առանցքային հատկանիշ և իր գագաթնակետին հասնում Սարգիս Պիծակի ձեռագրերում: Այն դառնում է ԺԴ դարի կիլիկյան Աստվածաշունչ մատյանների գեղարվեստական առանձնահատկություններից մեկը:

1314 թ. ընդօրինակված **ՄՄ 6230 Աստվածաշնչի** գրիչը Մարտիրոս արեղան է, Նոր Կտակարանի ծաղկողը՝ Ավագը (1356-1358 թթ.), իսկ Հին Կտակարանի նկարազարդումն արվել է Կիլիկիայում և ամբողջովին տարբերվում է Ավագի ձեռագրից: Այստեղ՝ աստվածաշնչյան գրքերի սկզբում, տեսնում ենք չներկված ուղղանկյուն ձակատազարդեր, զարդարուն գլխատառեր, որոնք նաև մարդկային կերպարանք ունեն: Օրինակ՝ Ղևտականի գլուխը սկսվում է մարդագիր գլխատառով, որը Մովսեսին է պատկերում (44 բ), իսկ 258 բ էջի Սաղմոսների գիրքը զարդարող գլխատառը ներկայացնում է տավիղ նվագող գեղեցկադեմ Դավիթ արքային:

Կիլիկյան Աստվածաշունչ մատյանների պատկերազարդումների գործում մեծ դեր ունի **Սարգիս Պիծակ** մանրանկարիչը: Պիծակը դառնում է աստվածաշնչյան նկարազարդումների փայլուն վարպետ, իսկ ԺԴ դարի առաջին կեսին ստեղծված կիլիկյան մի շարք պատկերազարդ Աստվածաշունչ մատյաններ, որոնք պահվում են աշխարհի տարբեր անկյուններում, հենց նրա վրձնին են պատկանում:

26 Տե՛ս նույն տեղում, էջ 187-188:

Միաձուլելով հայկական ազգային, արևմտյան և արևելյան քրիստոնեական արվեստի ավանդույթները՝ Պիժակը շարունակում է Հովհաննես Արքաեղբոր դպրոցի մշակած գեղարվեստական սկզբունքները, սակայն ավելի շատ հակվում դեպի բուն հայկական, հարթապատկերային-երկրաչափական ոճը: Նրա նկարազարդած Աստվածաշունչ մատյանների քանակը մեկ նկարչի համար տպավորիչ է, իսկ գեղարվեստական արժեքը՝ անգնահատելի: Այդ ձեռագրերն են Վենետիկի Հ^մ 1/1508 (1319 թ.), Երուսաղեմի Հ^մ 1930 (1323 թ.), Մատենադարանի Հ^մ 2627 (1338 թ.), ինչպես նաև նկարչին վերագրվող Ֆրեզոյի (մասնավոր հավաքածու) Աստվածաշնչերը:

Վենետիկի Հ^մ 1/1508 Աստվածաշնչի նկարազարդումն ավարտվել է 1319 թ., ընդօրինակողը Հոհաննեսն է (Հովհաննես)²⁷: Աստվածաշնչի գլխավոր բաժանումներն էջի կեսը զբաղեցնող կիսախորաններ ունեն, ինչպես Ծննդոց գրքի ու Սաղմոսների անվանաթերթերը (2ա և 253ա էջեր): Պատկերագրությունն ուշագրավ և ինքնատիպ է: Սաղմոսների անվանաթերթի կիսախորանում թագակիր Դավիթ արքան է, իսկ առավել հետաքրքրական է Ծննդոցի կիսախորանի Հայր Աստծո պատկերը, ինչը հազվադեպ հանդիպող երևույթ է (նկ. 6): Երկուսն էլ ալեհեր են, պատկերված են մինչև կուրծքը, դիմահայաց, աջ ձեռքով օրհնելու ժեստ անելիս:

Ծննդոցի անվանաթերթի լուսանցքում պատկերված է նաև Մովսես մարգարեն՝ կանգնած բարձր լուսանցազարդի գագաթին, որը հավանաբար խորհրդանշում է Սինայի լեռը, ձեռքը պարզած դեպի Արարիչը աղոթելիս: Այսպիսով՝ Հայր Աստծո հետ պատկերված է «Մովսես Սինայի լեռան վրա» տեսարանը՝ ինքնատիպ հորինվածքով:

Նման կառուցվածք ունի նաև Նոր Կտակարանի հարդարանքը: Մառթեոսի Ավետարանի անվանաթերթի կիսախորանում (418 ա, նկ. 7) տեսնում ենք մինչև կուրծքը պատկերված ավետարանիչին գրելիս: Փաստորեն, Պիժակը Հին Կտակարանի պատկերազարդման սկզբունքով շարունակում է նաև Նոր Կտակարանի պատկերազարդումը՝ ցուցաբերելով ստեղծագործական յուրահատուկ մոտեցում, ինչը բնորոշ է դառնում ԺԴ դարի կիլիկյան Աստվածաշնչերին:

Երուսաղեմի Հ^մ 1930 Աստվածաշունչն ընդօրինակել է Գրիգոր քահանան 1323 թ. Կիլիկյան Հայաստանի Սիս մայրաքաղաքում: Պատվիրատուն Ստեփաննոս եպիսկոպոսն է, հիշատակվում է նաև նրա աշակերտ և հոգեզավակ Յոհաննես քահանան²⁸: Այս ձեռագրում, լուսանցքային պատկերներից զատ, կան նաև ամբողջ էջը զբաղեցնող մանրանկարներ: Գահակալ Դավիթ արքայի պատկերը (6 բ) խոշոր չափերի է և, չնայած ներկված չլի-

27 St u Der Nersessian S., Manuscrits Arméniens Illustrés, des Xlle, Xllle et XlVe siècles de la bibliothèque des pères Mekhitharistes de Venise, Paris, "Librairie E. de Boccard", 1937, էջ 139:
 28 St u Պողարեան Ն. Եսպ., Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, հատ. Զ., Երուսաղեմ, 1972, էջ 435-439:

նելուն, շատ գեղեցիկ է: Արքան պատկերված է սաղմոսներ նվագելիս, գարդարուն շրջանակի մեջ, որը կազմված է երկու սյուններից և խորանից (նկ. 8):

Սարգիս Պիծակին է վերագրվում նաև **Ֆրեզնոյի**²⁹՝ մասնավոր հավաքածուի մաս կազմող անթվակիր Աստվածաշունչը, որի մասին հիշատակում է Սիրարփի Տեր-Ներսեսյանը²⁹: Այս ձեռագրում մանրանկարները սակավ են: Ավետարանների անվանաթերթերը փոքրիկ ուղղանկյուն գլխազարդեր ունեն՝ մեկ սյան լայնության (բացառությամբ Մատթեոսի Ավետարանի, որն ավելի հարուստ զարդարանքով է), իսկ Մատթեոս ավետարանիչի պատկերը զբաղեցնում է բնագրի միայն մեկ սյան վերին հատվածը³⁰: Հիմնական հիշատակարանը կորել է, բայց մնացած գրություններից պարզ է դառնում, որ ձեռագրի պատվիրատուն Կոստանդին վարդապետն է, ծաղկողը՝ Սարգիսը, իսկ ընդօրինակողը՝ նույն Հոհաննեսը (Սմբատի և Վասիլի եղբայրը), ինչ Վենետիկի Հ^մ 1/1508 և Երուսաղեմի Հ^մ 1946 ձեռագրերում³¹:

Հոհաննեսի գործունեության ժամանակաշրջանը հաշվի առնելով՝ պարզ է դառնում, որ Ֆրեզնոյի Աստվածաշունչն ընդօրինակվել է մոտավորապես 1310-1320-ական թթ.: Միևնույն ժամանակ այն պետք է դասել Սարգիս Պիծակի ծաղկած վաղ շրջանի ձեռագրերի շարքին (1320-ական թթ.): Այդ մասին են վկայում այն գեղարվեստական ընդհանրությունները, որոնք, ըստ Ս. Տեր-Ներսեսյանի, ամկա են սույն Աստվածաշունչի և Վենետիկի 1319 թ. պիծակյան ձեռագրի միջև³²:

Երևանի Մ. Մաշտոցի անվան Մատենադարանում պահվող Սարգիս Պիծակի միակ Աստվածաշունչը **1338 թ. ՄՄ 2627**-ն է (գրիչ՝ Հակոբ, շարունակող՝ նույն ինքը՝ ծաղկողը, պատվիրատու՝ Հակոբ Բ կաթողիկոս): Այս Աստվածաշունչում տեսնում ենք մանրանկարներ՝ ուղղահայաց շարքերով, որոնք զբաղեցնում են տեքստի սյունակներից մեկը և մյուսի մի հատվածը. տեղաբաշխման այս ձևը Կիլիկիա է ներթափանցել եվրոպական ձեռագրերից³³:

ԺԴ դարում ավելի հաճախ են սկսում ներթափանցել արևմտյան մոտիվներ, որոնց համար հիմք էին ծառայում բազմաթիվ հայկական վանքերը Իտալիայում և կաթոլիկ միսիոներների ու խաչակիրների՝ Կիլիկիա բերած գոթական ձեռագրերը³⁴: Գոթական արվեստի ազդեցությունը նկատելի է հատկապես 1338 թ. Աստվածաշունչում, ինչն արտահայտված է կերպարներ

29 Ձեռագիրը Ֆրեզնոյում բնակվող տիկին Հակոբյանի սեփականությունն է եղել, իսկ լուսանկարները հեղինակը ստացել է Չիկագոյի համալսարանի պրոֆեսոր Ուիլյամսի (տես *Der Nersessian S., Manuscrits Arméniens Illustrés, des XIIIe, XIIIe et XIVe siècles*, էջ 140-141):

30 Տես նույն տեղում:

31 Տես նույն տեղում, էջ 141:

32 Նույն տեղում, էջ 140-141:

33 Տես **Ղազարյան Վ.**, Սյուժետային մանրանկարը Կիլիկիայում, էջ 62, **Ղազարյան Վ.**, Սարգիս Պիծակ, Եր., ՊԱ, 1980, էջ 93:

34 Տես **Лазарев В.**, նշվ. աշխ., էջ 184:

րի պատկերման և հագուստի ձևավորման մեջ³⁵: Այդպիսին է 2 բ էջը, որում՝ իրար տակ, տեղադրված են երեք մանրանկարներ՝ «Սուրբ Երրորդություն», «Ադամ և Եվա», «Ահարոն և Մովսես»: Լուսանցքներում մարդկանց պատկերներն առատ են: Հինկտակարանային կերպարները պատկերված են մինչև կուրծքը, բուսական վերջավորություններով՝ որպես լուսանցազարդ, երեք քառորդ կամ ճակատային դիրքով կամ անտիկ փիլիսոփայի դիրքով՝ հասակով մեկ կանգնած³⁶:

Մի ուշագրավ կիլիկյան Աստվածաշունչ էլ պահվում է Սանկտ Պետերբուրգի **Էրմիտաժի թանգարանում (Հ^մ VP-1011)**: Այն, ամենայն հավանականությամբ, պատկանում է ԺԳ դ. վերջին կամ ԺԴ դ. սկզբին: Այս չքնադ Աստվածաշունչը 1940 թ. Էրմիտաժի թանգարանին է նվիրել Հայկական ՍՍՀ կառավարությունը³⁷: Նկարագրվել է արվեստաբան Տ. Իզմայլովայի կողմից: Աստվածաշնչի որոշ պատկերներ եզակի են, առաջին անգամ են հանդիպում, ինչը վկայում է սույն ձեռագրի ինքնատիպության և գեղարվեստական բարձր արժեքի մասին: 30 բ էջի «Ելք» գլխի լուսանցքում պատկերված խմբանկարը ներկայացնում է իսրայելցիներին, որոնք պատրաստվում են Մովսեսի գլխավորությամբ անցնելու Կարմիր ծովը և դուրս գալու Եգիպտոսից: «Թվերի» սկզբում՝ 66 ա էջի լուսանցքում, Մովսեսի շարքը շարունակում է «Մովսես Սինայի լեռան վրա» մանրանկարը, որում նա աղոթում է լուսավոր փառապատկի մեջ որպես երկնային գերբնական կերպար ներկայացված Տիրոջը: Այս մանրանկարներին հաջորդում են հինկտակարանային մարգարեների և աստվածաշնչյան արքաների պատկերները լուսանցքներում:

Եզրակացություններ

Այսպիսով՝ մեզ հասած հայերեն առաջին լիարժեք Աստվածաշնչի (1269 թ. Երզնկայի Աստվածաշունչ, Երսղւմ Հ^մ 1925) ստեղծումից առաջ Կիլիկիայում արդեն սկսվել էին ամբողջական Աստվածաշունչ մատյանների առաջին ընդօրինակումները, որոնք, ցավոք, չեն պահպանվել: Փաստորեն, հայերեն լիարժեք Աստվածաշունչ մատյանների ստեղծումը և դրանց պատկերազարդման համակարգի ձևավորումը սերտորեն կապված են Կիլիկիայի գրչատների հետ:

1250–1350–ական թթ. Կիլիկիայում ընդօրինակվում են մի քանի տասնյակ աստվածաշնչյան ձեռագրեր, որոնց մի մասը շքեղ հարդարանք ունի:

35 Տե՛ս նույն տեղում:
 36 Տե՛ս **Պազարյան Վ.**, Սարգիս Պիժակ, էջ 93, **Քեչիշյան Օ. Պ.**, Սարգիս Պիժակ. 1338 թ. Աստվածաշնչի մանրանկարները, Էջմիածին, 2013, հմր Զ., էջ 76-77:
 37 Տե՛ս **Измайлова Т.**, Армянские иллюстрированные рукописи Государственного Эрмитажа, Культура и искусство народов востока, Ленинград, 1969, էջ 114-116, **Der-Nersessian S.**, Note sur la Bible no VR 1011 du Musée de L'Ermitage, «Культура и искусство народов востока», Ленинград, 1969, էջ 116-119.

Հայերեն աստվածաշնչյան ձեռագրերի նկարագարդման համակարգի ձևավորման գործում անգնահատելի է ԺԳ դարի երկրորդ կեսին Կիլիկիայում գործած Հովհաննես Արքաեղբոր դպրոցի դերն ու նշանակությունը: Այս դպրոցում ընդօրինակված և նկարագարդված Աստվածաշունչ մատյանները հիմք դարձան աստվածաշնչյան հետագա նկարագարդումների համար ինչպես Կիլիկիայում, այնպես էլ նրա սահմաններից դուրս՝ բուն Հայաստանում:

Աստվածաշնչյան ձեռագրերի նկարագարդման արվեստը, որ Կիլիկիայում զարգացել է շուրջ հարյուր տարի, տասնամյակների ընթացքում փոփոխություններ կրելով, այնուամենայնիվ, հետընթաց չի ապրել, միայն ոճական որոշակի փոփոխությունների է ենթարկվել՝ պայմանավորված ժամանակի և միջավայրի թելադրանքով՝ հակվելով դեպի ավելի ազգային, հարթապատկերային-երկրաչափական ոճը: Դրա հետևանքով կիլիկյան մանրանկարչությունը հարստանում է պատկերագրական նոր թեմաներով ու հարդարման ձևի նորամուծություններով, ավելանում են լուսանցապատկերները, մեծ տարածում է ստանում լուսանցքներում կրճատված տեսարանների պատկերումը, նկատվում է ստեղծագործական ինքնատիպ մոտեցում:

Մեզ հայտնի թվագրված կիլիկյան վերջին աստվածաշնչյան ձեռագիրը Վիեննայի Մխիթարյանների գրադարանում պահվող **Հ⁴⁰ 113 Աստվածաշունչն** է (Մխ, 1356 թ.), որը պարզունակ զարդարանք ունի՝ միայն խորանների, կիսախորանների, լուսանցազարդերի տեսքով, մարդկանց կերպարներն արդեն բացակայում են: Դրանից հետո ոչ միայն դադարում են կիլիկյան Աստվածաշունչ մատյանների նկարագարդումները, այլև անկում է ապրում ողջ կիլիկյան մանրանկարչությունը, որին փոխարինելու է գալիս հայկական գաղթավայրերում ձևավորվող և կիլիկյան ավանդույթները կրող արդեն միանգամայն նոր արվեստ:

Օվսաննա Պ. Քեշիշյան – հեղինակ է 6 գիտական հոդվածի, զբաղվում է ԺԳ–ԺԴ դդ. հայերեն աստվածաշնչյան ձեռագրերի, մասնավորապես կիլիկյան աստվածաշնչյան ձեռագրերի նկարագարդման համակարգի, Հովհաննես Արքաեղբոր դպրոցում ընդօրինակված և ծաղկված աստվածաշնչյան ձեռագրերի և հինկտակարանային պատկերների ուսումնասիրությամբ:

Էլ. հասցե՝ keshishyanovsanna@gmail.com

THE ILLUSTRATIONS OF CILICIAN HANDWRITTEN BIBLES IN THE 1250-1350s

Ovsanna P. Keshishyan

Key words – Cilicia, Cilician miniature, The Bible, Bible illustrations, School of Hovhannes archbishop, The Bible of King Hetum, Sargis Pitsak, The Bible N 1508/1 of Venice, Old Testament illustrations.

Handwritten Bibles, created in Cilician Armenia, play a crucial role in the artistic decoration of the Armenian-language Bible. Cilicia plays a paramount role not only in the illustration of handwritten Armenian Bibles, but also, first of all, in their first full edition, made by Catholicos Nerses Lambronatsi at the end of the 12th century (1153-1198).

Before the creation of the first Bible in the Armenian language that has reached us (Bible from Yerznka, 1269, Jerusalem N 1925), the first full replications of complete Bibles had already started in Cilicia, which, unfortunately, have not been preserved.

The role of the activity of the school of Archbishop Hovhannes – the brother of King Hetum I, formed in the second half of the 13th century, is especially invaluable in the formation of the illustration system of handwritten Bibles. In the manuscripts, created here in the 1260-70s (Matenadaran N N 4243, 345), the almost completely formed illustration system of Cilician Bibles can already be seen, which becomes a basis for further biblical illustrations not only in Cilicia, but also in Armenia itself. To a certain degree, they carry the influence of the Byzantine book art.

The Latin influence increases in the period after the activities of Archbishop Hovhannes. Among biblical manuscripts carrying this influence are Bibles of 1295 (Matenadaran N 180) and N 179 of King Hetum II, copied by writer Stepanos Goyneritsants, where chapter separation is carried out with both Armenian and Franc numeration systems concurrently.

In the 14th century, the Cilician Bibles enter a new stage. The manuscript style changes, leaning more towards the national, geometrically flat-figure direction, at the same time, a new creative approach can be seen. Sargis Pitsak plays a significant role in the creation of Cilician biblical miniatures of the period.

Among the manuscripts illustrated by him, interesting is the Bible N 1508/1 (Venice), where, among the decorations of Psalms and Genesis title pages, we can see the busts of coronary king David and God-Father, rare here.

Another unique Cilician Bible is kept in Hermitage (VP-1011). In the first part of Bible miniatures we can see Moses's illustrations, and in the further parts – Old Testament kings, the illustrations of whose majority appear for the first time.

Резюме

ИЛЛЮСТРАЦИИ КИЛИКИЙСКИХ РУКОПИСНЫХ БИБЛИЙ 1250-1350-ЫХ ГГ.

Овсанна П. Кешишян

Ключевые слова – Киликия, Киликийская миниатюра, Библия, иллюстрирование Библий, школа архиепископа Ованнеса, Библия царя Этума, Саргис Пицак, Библия №1508/1 Венеции, ветхозаветные сюжеты.

В статье изучаются рукописные Библии, созданные в армянской Киликии. Они играют важнейшую роль в развитии художественного оформления Библии на армянском языке. Роль Киликии первостепенна не только в деле иллюстрирования армянских рукописных Библий, но и, в первую очередь, в их первой полной редакции, которую в конце XII в. осуществил католикос Нерсес Ламбронати (1153-1198 гг.).

До создания дошедшей до нас первой Библии на армянском языке (Библия из Ерзнка 1269 г., Иерусалим, № 1925) в Киликии уже были скопированы Библии, которые, к сожалению, не сохранились.

В системе оформления иллюстраций в рукописных Библиях особенно значима деятельность школы архиепископа Ованнеса – брата царя Этума Первого, сформировавшейся во второй половине XIII в. В созданных здесь в 1260-1270-ых гг. рукописях (Матенадаран № 4243, № 4345) видна почти полностью сформировавшаяся иллюстративная система киликийских Библий, которая становится основой для дальнейших иллюстраций Библий как в Киликии, так и в самой Армении. В некоторой степени эти иллюстрации носят влияние византийского книжного искусства.

В период, следовавший за деятельностью архиепископа Ованнеса, в 1290-ые гг., усиливается латинское влияние. Среди библейских рукописей этого периода выделяются Библии 1295 г. царя Этума Второго (Матенадаран № 180) и № 179, скопированные писцом Степаносом Гойнерицанцом, где разделение глав выполнено параллельно и в армянской, и во франкской системах нумерации.

В XIV в. меняется стиль иллюстративной системы рукописей киликийских Библий, который все больше склоняется к национальному, геометрично-плоскостному направлению, но одновременно и проявляется новый творческий подход. В создании киликийских библейских иллюстраций этого периода значительное место занимает миниатюрист Саргис Пицак.

Среди иллюстрированных им рукописей интересна Библия № 1508/1 (Венеция), где в декорациях титульных листов книг Псалмов и Бытия мы видим бюсты царя Давида и Бога-отца, которые в этот период являются редкостью. На одной из страниц иерусалимской Библии № 1930 мы видим апостола Павла и заказчика епископа Степаноса, стоящего перед ним на коленях.

Еще одна уникальная киликийская Библия хранится в Эрмитаже (VP-1011). На миниатюрах первой части этой Библии мы видим изображения Моисея, а в последующих частях – ветхозаветных царей, изображения большинства которых встречаются впервые.

REFERENCES

1. **Achēmean Sh. ark’.**, Hayerēn Astuatsashunch’ē, Yer., YEPH, 2006 (**In Armenian**).
2. **Akinean H. N. V.**, Nerses Lambronats’i, ark’episkopos Taroni, Vienna, “Mkhit’arean tparan”, 1956 (**In Armenian**).
3. **Alishan Gh. V.**, Sisuan, Venetik, Sb. Ghazar, 1885 (**In Armenian**).
4. **Azaryan L.**, Kilikyan manrankarch’ut’yunè XII-XIII dd., Yer., GA, 1964 (**In Armenian**).
5. **Drambyan I.**, Het’um B. ark’ayi Chashots’ē, Yer., “Nairi”, 2004 (**In Armenian**).
6. **Ghazarjan V., Manukjan S.**, Matenadaran, “Moskva kniga”, 1991 (**In Russian**).
7. **Ghazaryan V.**, Sargis Pitsak, Yer., GA, 1980 (**In Armenian**).
8. **Ghazaryan V.**, Syuzhetayin manrankarè Kilikiayum, XIII. d. verj, XIV d. skizb, Yer., GA, 1984 (**In Armenian**).
9. **Izmajlova T.**, Armjanskije illjustrirovannyje rukopisi Gosudarstvennogo Ermitazha, “Kul’tura I iskusstvo narodov vostoka”, Leningrad, 1969 (**In Russian**).
10. **K’eshishyan Ō. P.**, Hovhannes Ark’ayeghbor dprots’um dzevavorvats astvatsashnch’yan dzeragreri nkarazardman hamakargè yev gegharvestakan ařandznahatkut’yunnerè, Yeritasardakan 3-rd gitazhoghovi zekuts’umner, Yer.-Matenadaran, 2018 (**In Armenian**).
11. **K’eshishyan Ō. P.**, Sargis Pitsak: 1338 t’. Astvatsashnch’i manrankarnerè, Èjmiatsin, 2013, N Z (**In Armenian**).
12. **Lazarev V.**, Istorija vizantijskoj zhivopisi, M., “Iskusstvo”, 1986 (**In Russian**).
13. Mayr Mashtots’, ashkh. **Ter-Vardanyan G.**, girk’ A., Sb. Èjmiatsin, 2012 (**In Armenian**).
14. **Nersesyan N. av. k’hn.**, Astvatsashunch’è yev hay mshakuyt’è, London, 2001 (**In Armenian**).
15. **Pogharean N. yeps.**, Mayr ts’uts’ak dzeragrats’ Srbots’ Yakobeants’, hat. Z., Yerusaghēm, 1972 (**In Armenian**).
16. **Sargisean H. B. v.**, Mayr ts’uts’ak hayerēn dzeragrats’ Matenadaranin Mkhit’areants’ I Venetik, hat. A., Venetik, 1914 (**In Armenian**).
17. **Ter-Movsesjan M.**, Istorija perevoda Biblii na armjanskij jazyk, S. Peterburg, 1902 (**In Russian**).



Նկ. 1. ՄՄ 4243, 50ա, Պետրոս առաքյալ



Նկ. 2. ՄՄ 345, 439բ, Սողոմոն



Նկ. 3. ՄՄ 180, 384ա, Անդկ



Նկ. 4. ՄՄ 180, 389, Հովնան և Աբիդու



Նկ. 5. ՄՄ 179, 1բ, Մովսես



Նկ. 6. Վնսկ 1_1508, 2ա, Ծննդոց գիրք



Նկ. 7. Վնսկ 1_1508, 418ա,
Մատթեոս ավետարանիչ



Նկ. 8. Երսղմ 1930, 6բ, Ղափիթ արքա

Վեյն համահայկական հանդես, ԺԳ (ԺԹ) փարի. թիվ 4 (76), հոկտեմբեր-դեկտեմբեր, 2021